

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/3

ք. Երևան

23.12.2024թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ԱՄՎ Պարտներ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1) ի դեմս տնօրեն Ա. Մինասյանի, «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն (Գործընկեր-2) ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի և «Սիթի Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն (Գործընկեր-3) ի դեմս տնօրեն Ս. Թորոսյանի (այսուհետ երեքը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 26.11.2024թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով և N 1.2 Հավելվածով տեխնիկական բնութագիր-կառուցման աշխատանքների առաջադրանքին համապատասխան, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը), ծավալաթերթ-նախահաշվով և նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին և տեխնիկական բնութագիր-կառուցման աշխատանքների առաջադրանքին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 900 օրացուցային օր: Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «՝ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 3 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի

մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **2 938 998 000 (երկու միլիարդ ինը հարյուր երեսունութ միլիոն ինը հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ, որից 489 833 000 (չորս հարյուր ութսունինը միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, (կանխավճարի ստացման գրությունը՝ կից համապատասխան բանկային երաշխիքով, ներկայացնելու պահին տվյալ եռամսյակում առկա ֆինանսական միջոցների մնացորդից ոչ ավել) եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝
 ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է
 ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է՝
 3 180 755 347 ՀՀ դրամ.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.2.1 Ուշացված օրեր չեն հաշվարկվում պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա: Պատասխանատու ստորաբաժանումը նման եզրակացություն է ներկայացնում՝ հիմք ընդունելով տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությամբ արձանագրված համապատասխան օրերի ընթացքում շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվությունը:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը, ինչպես նաև 6.5.1 կետով նախատեսված պատասխանատվության միջոցները հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.5.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտում	Պատասխանատվություն
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	350 000 ՀՀ դրամ
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	1 000 000 ՀՀ դրամ
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	700 000 ՀՀ դրամ

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ

պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները.

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ

որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027639
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Է.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

Գործընկեր-1
«ԱՄՎ Պարտներ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մայաթիա-Սեբաստիա
Անտ Բարաջանյան 52/2
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 250001367210100
ՀՎՀՀ 01333953



Տնօրեն՝
Ա.Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր-2
«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, ք. Գավառ, Ազատության 41/5,
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2500011209980100
ՀՎՀՀ 08420926

Տնօրեն՝
Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Գործընկեր-3
«Սիթի Քոնսթրաքշն» ՍՊԸ
ՀՀ, ք. Մասիս, 1 թաղ., 5-րդ փ., 22 տուն
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2472904546090000
ՀՎՀՀ 04232042



Տնօրեն՝
Ս. Թորոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	1 միավորի արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը /հազ. դրամ/
N1-1 Շինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	Հողաբուսական շերտի /III կարգի գրունտի/ մշակում բուլդոզերով տեղափոխելով 50մ /հետագայում օգտագործելու համար/	մ3	166	0.45	74.08
2	III կարգի գրունտի /լիցքային գրունտի/ մշակում էրակավատորով ա/հրեքաթափերի վրա բարձելով	մ3	275	0.67	183.24
3	V-րդ կարգի գրունտի /տուֆային/ փխրեցում հիդրոնորմով	մ3	4875	5.47	26646.37
4	Փխրեցված գրունտի մշակում էրակավատորով ա/հրեքաթափերի վրա բարձելով	մ3	4875	0.85	4148.00
5	Մշակված գրունտի տեղափոխում լցակույտ, մինչև 1կմ /դեպի հանք/	տ	5362.5	1.10	5874.00
6	Փոսթրակի հիմնատակի հարթեցում /մշակում ձեռքով/	մ3	64	6.10	390.44
7	III կարգի գրունտի մշակում էրակավատորով ա/հրեքաթափերի վրա բարձելով	մ3	2656	0.67	1769.72
8	Մշակված գրունտի տեղափոխում լցակույտ, մինչև 6կմ /բերում ետլիցքի համար/	տ	4476.4	2.23	9988.36
9	Գրունտի ետլիցք բուլդոզերով	մ3	2871	0.06	175.88
10	Գրունտի տափանում /շերտ-շերտ 20-30սմ/	մ3	2871	0.34	966.26
11	Գրունտի ետլիցք ձեռքով, տափանումով	մ3	60	1.45	86.79
12	Գրունտի /ետլիցքի/ ջրում	մ3	2931	0.38	1110.53
Հիմքեր					
1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B10 դասի բետոնից, 15սմ հաստությամբ	մ3	72.5	44.66	3237.50
2	Ե/բ միաձույլ հիմքի հեծանների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	510.4	95.27	48624.70
3	Ամրան Փ10AcI	տ	20.193	464.95	9388.80
4	Ամրան Փ16A500C	տ	5.006	474.51	2375.38
5	Ամրան Փ18A500C	տ	1.665	474.51	790.05
6	Ամրան Փ20A500C	տ	6.905	474.51	3276.47
7	Ամրան Փ22A500C	տ	7.721	474.51	3663.67
8	Ամրան Փ25A500C	տ	5.360	474.51	2543.36
9	Ամրան Փ28A500C	տ	10.096	474.51	4790.62
10	Խամբարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B15 դասի բետոնով	մ3	205	48.84	9986.77
11	Գրունտի հետ շփվող ե/բ մակերեսների ուղղահայած ջրամեկուսացում թաղանթով 2 շերտ, բիտումային մածիկի վրա	մ2	910	3.12	2843.62
Պատեր, հիմնակմախք					
1	Ե/բ միաձույլ դիաֆրագմաների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	366.8	123.95	45466.40
2	Ամրան Փ8AcI	տ	2.149	464.95	999.18
3	Ամրան Փ8A500C	տ	0.105	506.35	53.17
4	Ամրան Փ10A500C	տ	6.333	498.70	3158.30

5	Ամրան Φ12A500C	տ	17.655	474.51	8377.42
6	Ամրան Φ14A500C	տ	14.313	474.51	6791.62
7	Ամրան Φ16A500C	տ	6.232	474.51	2957.13
8	Ամրան Φ18A500C	տ	2.210	474.51	1048.66
9	Ամրան Φ22A500C	տ	5.458	474.51	2589.86
10	Ամրան Φ25A500C	տ	3.816	474.51	1810.72
11	Թերթապողպատ d=20մմ	տ	0.291	838.28	243.94
12	Ե/բ միաձույլ եզրապատերի պատրաստում B25 դասի բետոնից	մ3	76.5	117.47	8986.51
13	Ամրան Φ8Acl	տ	0.228	464.95	106.01
14	Ամրան Φ8A500C	տ	2.216	506.35	1122.07
15	Ամրան Φ10A500C	տ	4.228	498.70	2108.52
16	Ե/բ միաձույլ պատերի պատրաստում B25 դասի բետոնից, մինչև 500մմ հաստությամբ	մ3	18.2	87.40	1590.65
17	Ե/բ միաձույլ պատերի պատրաստում B25 դասի բետոնից, մինչև 200մմ հաստությամբ	մ3	8.9	117.47	1045.49
18	Ամրան Φ6Acl	տ	0.051	464.95	23.71
19	Ամրան Φ8Acl	տ	0.143	464.95	66.49
20	Ամրան Φ8A500C	տ	0.189	506.35	95.70
21	Ամրան Φ10A500C	տ	0.100	498.70	49.87
22	Ամրան Φ12A500C	տ	0.915	474.51	434.17
23	Ամրան Φ14A500C	տ	0.502	474.51	238.20
24	Ամրան Φ16A500C	տ	0.192	474.51	91.11
25	Ամրան Φ18A500C	տ	0.344	474.51	163.23
26	Ամրան Φ20A500C	տ	0.152	474.51	72.13
27	Ե/բ միաձույլ սյուների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	237.2	143.11	33945.37
28	Ամրան Φ8Acl	տ	8.900	464.95	4138.09
29	Ամրան Φ20A500C	տ	0.892	474.51	423.26
30	Ամրան Φ22A500C	տ	3.594	474.51	1705.38
31	Ամրան Φ25A500C	տ	5.396	474.51	2560.44
32	Ամրան Φ28A500C	տ	34.937	474.51	16577.86
33	Թերթապողպատ d=20մմ	տ	5.152	770.35	3968.85
34	Ե/բ միաձույլ պարզունակների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	663.8	102.15	67807.06
35	Ամրան Φ8Acl	տ	26.317	464.95	12236.18
36	Ամրան Φ12A500C	տ	3.368	474.51	1598.14
37	Ամրան Φ18A500C	տ	5.151	474.51	2444.19

38	Ամրան Φ20A500C	տ	21.674	474.51	10284.47
39	Ամրան Φ22A500C	տ	24.036	474.51	11405.25
40	Ամրան Φ25A500C	տ	12.847	474.51	6095.99
41	Ամրան Φ28A500C	տ	12.082	474.51	5733.00
42	Ե/բ միաձույլ հեծանների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	39	102.15	3983.84
43	Ամրան Φ8Acl	տ	0.900	464.95	418.46
44	Ամրան Φ12A500C	տ	0.112	474.51	53.14
45	Ամրան Φ16A500C	տ	0.468	474.51	222.07
46	Ամրան Φ18A500C	տ	2.463	474.51	1168.71
47	Վերելակի հորանների ե/բ միաձույլ պատերի պատրաստում B25 դասի բետոնից /մինչև -3.30 կիշը/	մ3	8.8	103.22	908.35
48	Ամրան Φ6Acl	տ	0.016	464.95	7.44
49	Ամրան Φ20A500C	տ	2.760	474.51	1309.64
50	Վերելակի հորանների ե/բ միաձույլ պատերի պատրաստում B15 դասի բետոնից /-3.30 կիշից վերևվ/	մ3	13.4	95.53	1280.14
51	Ամրան Φ6Acl	տ	0.013	464.95	6.04
52	Ամրան Φ8A500C	տ	0.943	506.35	477.49
53	Ամրան Φ12A500C	տ	0.048	474.51	22.78
54	Թերթապողպատ d=2.5մմ	տ	0.034	1121.70	38.14
55	Ե/բ միաձույլ ծածկի սալերի պատրաստում B15 դասի բետոնից /վերելակների հորանների համար 11.40 կիշի վրա/	մ3	3	76.98	230.93
56	Ամրան Φ6Acl	տ	0.005	464.95	2.32
57	Ամրան Φ10A500C	տ	0.221	498.70	110.21
58	Արտաքին պատերի կառուցում թեթևաբետոնե 200մմ հաստության բլոկներից	մ3	320	28.05	8975.30
59	Պատերի շարվածքի ամրանավորում	տ	6.724	93.02	625.47
60	Ամրան Φ8A500C	տ	1.911	506.35	967.63
61	Ամրան Φ10A500C	տ	4.813	498.70	2400.27
62	Թերթապողպատ d=2.5մմ	տ	0.377	1121.70	422.88
63	Դատարկությունների լցում B15 դասի բետոնով	մ3	61.8	64.06	3958.73
64	Ներքին պատերի կառուցում թեթևաբետոնե 200մմ հաստության բլոկներից	մ3	772.16	28.05	21657.40
65	Պատերի շարվածքի ամրանավորում	տ	15.443	93.02	1436.51
66	Ամրան Φ8A500C	տ	15.443	506.35	7819.53
67	Թերթապողպատ d=2.5մմ	տ	0.618	1121.70	693.21
68	Դատարկությունների լցում B15 դասի բետոնով	մ3	115.8	64.06	7417.81
69	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B15 դասի բետոնից	մ3	15.5	99.99	1549.78
70	Ամրան Φ8A500C	տ	0.775	506.35	392.42

Մետաղակառուցվածքներ					
1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B10 դասի բետոնից, 15սմ հաստությամբ	մ3	6.8	44.66	303.66
2	Ե/բ միաձույլ կետային հիմքերի պատրաստում B25 դասի բետոնից	մ3	8	70.88	567.07
3	Ամրան Փ16A500C	տ	0.128	498.70	63.83
4	Ամրան Փ8AcI	տ	0.024	464.95	11.16
5	Ե/բ միաձույլ հիմքի հեծանների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	19	96.82	1839.57
6	Ամրան Փ16A500C	տ	0.836	498.70	416.92
7	Ամրան Փ8AcI	տ	0.409	464.95	190.17
8	Ե/բ միաձույլ հանգույցների պատրաստում B25 դասի բետոնից /ըստ նախագծի/	մ3	16.8	88.60	1488.40
9	Ամրան Փ12A500C	տ	0.362	474.51	171.77
10	Հեղույաներ M24, L=700մմ	կգ	588	1.53	898.82
11	Թերթապողպատ d=8մմ	տ	0.394	726.08	286.08
12	Թերթապողպատ d=12մմ	տ	0.434	726.08	315.12
13	Պողպատե կանգնակների տեղադրում	տ	4.272	59.09	252.42
14	Թերթապողպատ d=4մմ	տ	0.406	726.08	294.79
15	Թերթապողպատ d=10մմ	տ	0.024	726.08	17.43
16	Քառակուսի կտրվածքի խողովակ c200x200x5մմ	տ	1.056	621.60	656.41
17	Շվեյեր N20	տ	2.786	738.54	2057.58
18	Պողպատե հեծանների տեղադրում		3.100	94.22	292.07
19	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ c80x40x3մմ	տ	1.026	527.40	541.11
20	Երտավր N24	տ	0.536	653.43	350.24
21	Երտավր N33	տ	1.538	598.77	920.90
22	Մետաղական տարրերի ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ	տ	7.372	26.69	196.74
Միջևորմեր					
1	Միջևորմերի կառուցում թեթևաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ	մ2	511.94	4.32	2211.66
2	Միջևորմերի շարվածքի ամրանավորում	տ	1.229	93.02	114.32
3	Ամրան Փ8A500C	տ	1.229	506.35	622.30
4	Թերթապողպատ d=2.5մմ	տ	0.082	1121.70	91.98
5	Դատարկությունների լցում B15 դասի բետոնով	մ3	5.1	64.06	326.69
6	Միջևորմերի կառուցում զիպսաստվարաթղթե սալերից 100մմ հաստությամբ, մետաղական հիմնակմախիթով, ձայնամեղուսացմամբ, երկկողմանի սալապատումով d=12.5մմ	մ2	2358.41	9.27	21850.93
Ծածկեր					
1	Ե/բ միաձույլ ծածկի սալերի պատրաստում B25 դասի բետոնից	մ3	912.4	86.33	78768.63
2	Ամրան Փ8AcI	տ	1.805	464.95	839.24

3	Ամրան Փ8A500C	տ	7.695	506.35	3896.35
4	Ամրան Փ10A500C	տ	69.414	498.70	34617.10
5	Ամրան Փ12A500C	տ	6.408	474.51	3040.64
6	Թերթապողպատ d=10մմ	տ	0.02	838.28	16.77
Աստիճաններ					
1	Ե/բ միաձույլ աստիճանների պատրաստում B25 դասի բետոնից	մ3	58.4	110.99	6481.54
2	Ամրան Փ6Acl	տ	0.587	464.95	272.93
3	Ամրան Փ8A500C	տ	0.295	506.35	149.37
4	Ամրան Փ10A500C	տ	0.972	498.70	484.74
5	Ամրան Փ12A500C	տ	2.742	474.51	1301.10
6	Աստիճանների /աստիճանահարթակների/ երեսապատում չսահող մամլագրանիտ սալերով	մ2	204.35	20.71	4232.72
7	Աստիճանահարթակների երեսապատում չսահող մամլագրանիտ սալերով	մ2	185.71	10.94	2031.86
8	Աստիճանավանդակների այլումին բազիթների տեղադրում h=900մմ	զմ	134	20.96	2809.10
9	Աստիճանավանդակների պատի վրայի այլումին բռնաձողերի տեղադրում	զմ	134	10.08	1350.32
10	Պատշգամբի այլումին բազիթի տեղադրում	զմ	2.4	20.96	50.31
11	Խամբարբետոնե զանգվածի իրականացում արտաքին աստիճանների տակ, B10 դասի բետոնով	մ3	237.2	45.88	10883.45
12	Շերտի իրականացում B15 դասի բետոնից, արտաքին աստիճանների տակ	մ3	42	50.65	2127.44
13	Շերտի ամրանավորում Փ8A500C ամրանով	տ	0.8	533.29	426.63
14	Ե/բ միաձույլ հենապատերի պատրաստում B15 դասի բետոնից /ներառյալ հիմքերը/	մ3	27	82.61	2230.60
15	Ամրան Փ8Acl	տ	0.467	464.95	217.13
16	Ամրան Փ10A500C	տ	0.672	498.70	335.13
17	Ամրան Փ18A500C	տ	0.720	474.51	341.65
18	Գրունտի տոփանում խճով /մուտքի աստիճանների եւ թերահարթակների տակ/	մ2	285	0.40	114.54
19	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ2	285	1.59	454.32
20	Արտաքին աստիճանների, հարթակների եւ թերահարթակների երեսապատում բազալտ սալերով 50մմ հաստությամբ	մ2	285	18.88	5380.64
21	Ջենապատի երեսապատում բազալտ սալերով 30մմ հաստությամբ	մ2	73.6	33.61	2473.52
Դռներ /ըստ նախագծի/					
1	Այլումին դռների տեղադրում /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը, ապակեփաթեթը անհրաժեշտության դեպքում	մ2	29.4	89.21	2622.72
2	Այլումին դռների տեղադրում ջերմամեկտրացված /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը, ապակեփաթեթը անհրաժեշտության դեպքում	մ2	42	128.23	5385.50
3	Այլումինե ճոճվող դռների տեղադրում /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը, ապակեփաթեթը անհրաժեշտության դեպքում	մ2	114.24	98.13	11210.73
4	Պլաստիկ դռների տեղադրում	մ2	609.63	3.15	1920.03
5	Միափեղկ պլաստիկ դռներ Դ-1, Դ-2, Դ-9/ ըստ նախագծի/	հատ	261	82.80	21610.28
6	Ինտեքստի ստառնեկե օճեկը Փ3.10/ ըստ նախագծի/	կտր	12	108.98	1307.76

Կարգաթիվ	Նկարագրող պատճառի դրույթ / ըստ նախագծի/	Կատ	Կ	Կ	Կ
7	Երկփեղկ պլաստիկ դռներ /Դ-3/ /ըստ նախագծի/	հատ	46	108.28	4980.66
8	Պլաստիկ դռների ապակեպատում	հատ	148	12.74	1885.19
9	Մետաղական ռևոլյուցիոնար դռների տեղադրում /ըստ նախագծի/	մ2	6.72	141.71	952.32
10	Մետաղական ճաղաշարով դռների տեղադրում	մ2	1.89	120.42	227.60
11	Չափաբերիչ	հատ	109	38.21	4165.43
12	Բացվող դռների ֆիքսելու հարմարանք	հատ	109	1.83	199.94
13	Հակախուճապային բռնակ երկփեղկ դռների համար	հատ	10	163.56	1635.60
14	Մետաղական դռների յուղաներկում /գույնը ըստ նախագծի/	մ2	20.7	1.00	20.69
15	Առաստաղի դռակների տեղադրում 40x60սմ չափերի	հատ	12	6.69	80.28
16	Առաստաղի դռակների տեղադրում 60x60սմ չափերի	հատ	93	8.70	808.86
Պատուհաններ /ըստ նախագծի/					
1	Այլումինե պատուհանների տեղադրում ապակեփաթեթով, ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, բռնակ-փակիչները, ապակեպատումը, ներկումը բացվող	մ2	359.52	115.17	41404.71
2	Այլումինե պատուհանների տեղադրում ապակեփաթեթով, ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ ապակեպատումը, ներկումը չբացվող	մ2	160.5	62.45	10022.77
3	Այլումինե պատուհանների տեղադրում լամինացված տրիպլեքս ապակիով ճմմ /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, բռնակ-փակիչները, ապակեպատումը, ներկումը բացվող	մ2	0.65	72.48	47.11
4	Այլումինե պատուհանների տեղադրում լամինացված տրիպլեքս ապակիով ճմմ /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ ապակեպատումը, ներկումը չբացվող	մ2	1.5	43.49	65.23
5	Միջատապաշտպան ցանց	մ2	359.52	12.04	4329.53
6	Այլումինե պատուհանագրգեր 100x750սմ	հատ	321	2.01	644.27
7	Բարդ է. սովորական փականների գնային տարբերությունը	հատ	90	7.64	687.87
Վիտրամներ /ըստ նախագծի/					
1	Անհատական պատրաստման այլումինե շրջանակով ապակեփաթեթով, ջերմամեղմանով միջնորմների տեղադրում /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ ապակեպատումը, ներկումը չբացվող	մ2	57.1	62.45	3565.73
2	Անհատական պատրաստման այլումինե շրջանակով դռների տեղադրում միջնորմներում ապակեփաթեթով, ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը, ապակեփաթեթը	մ2	22.9	128.23	2936.38
3	Անհատական պատրաստման այլումինե շրջանակով լամինացված տրիպլեքս ապակիով ճմմ միջնորմների տեղադրում /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ ապակեպատումը, ներկումը չբացվող	մ2	142.6	43.49	6201.23
4	Անհատական պատրաստման այլումինե շրջանակով լամինացված տրիպլեքս ապակիով ճմմ դռների տեղադրում /ներկված գույնը ըստ նախագծի/	մ2	56.3	89.21	5022.43
5	Անհատական պատրաստման այլումինե ճակատային համակարգերի /վիտրամների/ տեղադրում ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ ապակեպատումը, ներկումը չբացվող	մ2	160.4	62.45	10016.52
6	Անհատական պատրաստման այլումինե ճակատային համակարգերի /վիտրամների/ տեղադրում ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, բռնակ-փակիչները, ապակեպատումը, ներկումը բացվող	մ2	13.1	115.17	1508.68
7	Անհատական պատրաստման այլումինե շրջանակով դռների տեղադրում միջնորմներում ապակեփաթեթով, ջերմամեղմանով /ներկված գույնը ըստ նախագծի/, ներառյալ սարքերը, կողպեքը, ներկումը, ապակեփաթեթը	մ2	18.5	128.23	2372.18
8	Չափաբերիչ	հատ	5	38.21	191.07

9	Բացվող դռների ֆիքսելու հարմարանք	հատ	5	1.83	9.17
10	Հակախուճապային բռնակ միափեղկ դռների համար	հատ	4	70.93	283.71
11	Հակախուճապային բռնակ երկփեղկ դռների համար	հատ	3	163.56	490.68
12	Չափաբերիչ	հատ	30	38.21	1146.45
13	Բացվող դռների ֆիքսելու հարմարանք	հատ	30	1.83	55.03
Հատակներ					
1	Ե/բ միաձույլ հատակի սալերի պատրաստում B15 դասի բետոնից	մ3	223	47.93	10688.40
2	Ամրան ՓՑA500C	տ	9.240	506.35	4678.65
3	Թերթապողպատ d=4մմ	տ	0.052	838.28	43.59
4	Գրունտի տոփանում խճով	մ2	2059.96	0.40	827.89
5	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 45մմ հաստությամբ	մ2	4919.56	2.25	11045.76
6	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 40մմ հաստությամբ	մ2	1491.20	2.03	3024.48
7	Խարամի շերտի իրականացում	մ3	390.22	6.95	2711.32
8	Հատակների պատրաստում չսահող մամլագրանիտ սալերից	մ2	1006.04	10.94	11007.12
9	Խեցեսալե հատակների պատրաստում	մ2	499.42	10.64	5316.22
10	Վիկիլային հատակների պատրաստում 2մմ հաստությամբ, ներառյալ ինքնահարթեցվող շերտը, ՊՎՔ լարը, սոսինձը	մ2	3996.08	9.36	37399.98
11	Հակատատիկ վիկիլային հատակների պատրաստում 2մմ հաստությամբ, ներառյալ ինքնահարթեցվող շերտը, ՊՎՔ լարը, սոսինձը	մ2	923.48	9.86	9107.43
12	Բարիտաբետոնե շերտ 30մմ հաստությամբ	մ2	67.78	3.76	255.04
13	Մամլագրանիտե շրիշակների տեղադրում h=10սմ	զմ	975.9	1.47	1432.19
14	Վիկիլային հատակների նրբատախտակից եզրակալների պատրաստում	զմ	2937	0.57	1678.81
15	Վիկիլային հատակների ռեոինե եզրակալների եւ ռեոինե անկյունակների տեղադրում	զմ	703.3	0.38	268.77
16	Պլաստմասե շրիշակներ 80մմ բարձրությամբ	զմ	252	1.54	389.06
Տանիք					
1	Տանիքի գոլորշամեկուսացում 1 շերտ իզոգամով /կամ համարժեք/	մ2	2130.44	2.15	4588.61
2	Տանիքի ջերմամեկուսիչ շերտ 100մմ հաստությամբ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ) չայրվող բազալտե հանքաքարակե սալեր	մ2	2130.44	16.15	34403.32
3	Ջրամեկուսիչ թաղանթ	մ2	2130.44	2.35	4996.72
4	Խարամաբետոնե շերտի իրականացում l=1.5-2% թեքությամբ	մ3	117	41.27	4828.75
5	Տանիքի ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ, ամրանավորված ցանցով, միջին հաստությունը 40մմ	մ3	85.2	46.84	3990.38
6	Շերտի ամրանավորում Փ4Bբլ քայլը 200մմ	տ	2.177	723.31	1574.64
7	Շերտի ամրանավորում Փ4Bբլ քայլը 6մ, որը կմիամցվի շանթապաշտպան համակարգին	տ	0.242	723.31	175.04
8	Տանիքի երկշերտ ջրամեկուսիչ գորգ (երկրորդ շերտի վերին շերտը ավազե թաղանթով)	մ2	2130.44	5.54	11804.57
9	Տանիքում հորանների շուրջ բլոկներով շար (100մմ), ծածկի վրայից h= 700 միև	մ2	191.36	4.32	826.70
10	Հովանոցների հիմնակմախքի պատրաստում	տ	1.04	222.57	231.47

11	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ $\varnothing 40 \times 20 \times 2.5$ մմ /200մ/	տ	0.43	548.49	235.85
12	Քառակուսի կտրվածքի խողովակ $\varnothing 20 \times 20 \times 2$ մմ /564.7մ/	տ	0.61	551.99	336.71
13	Հովանոցների ծածկերի իրականացում ցինկապատ հարթ թիթեղից $\varnothing = 0.7$ մմ	մ2	57	6.96	396.67
14	Տանիքի պարպետի վրա թասակների իրականացում իրականացում ցինկապատ հարթ թիթեղից $\varnothing = 0.5$ մմ, տվյալ հատվածի ֆիբրոպլաստիկ գույնի փոշուներով $L = 35$ սմ/	մ2	143.85	9.88	1421.34
Ներքին հարդարում					
1	Պատերի գաջն սվաղում բարելավված որակի	մ2	10301.5	3.08	31759.97
2	Շեյքերի գաջն սվաղում	մ2	168.17	7.33	1233.36
3	Առաստաղի գաջն սվաղում բարելավված որակի	մ2	482.95	3.70	1784.78
4	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի	մ2	2786.72	2.51	7007.26
5	Շեյքերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով	մ2	59.25	5.44	322.20
6	Աճ1 տեղեկի լարահանման սենյակում պատերի սվաղում բարիտաբեռնով, 30մմ հաստությամբ	մ2	65.28	11.40	744.11
7	Պատերի և շեյքերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ձեփամածկումով	մ2	10514.5	1.63	17091.48
8	Պատերի և շեյքերի ներկում հակասեպտիկ լատեքսային ներկով, բարելավված որակի, ձեփամածկումով	մ2	2817.96	2.64	7430.07
9	Պատերի և շեյքերի երեսպատում հախճապատով	մ2	2318.56	10.12	23466.73
10	Կախովի առաստաղի պատրաստում "Արմատրոնգ" տիպի, ներառյալ կցամասերը	մ2	3082.47	7.56	23317.90
11	Կախովի առաստաղի պատրաստում գիպսատվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով	մ2	2500.15	6.73	16824.27
12	Կախովի առաստաղի պատրաստում ջրակայուն գիպսատարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով	մ2	279.49	7.02	1961.95
13	Կախովի առաստաղի պատրաստում շերտավոր պլաստիկից, մետաղական հիմնակմախքով	մ2	246.2	9.59	2360.51
14	Առաստաղի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ձեփամածկումով	մ2	2531.89	1.82	4615.56
15	Առաստաղի ներկում հակասեպտիկ լատեքսային ներկով, բարելավված որակի, ձեփամածկումով	մ2	768.00	2.83	2176.62
16	Միջանցքների պատերի անկյունային մասերում ալյումինե անկյունակների տեղադրում	զմ	180.8	1.21	218.29
17	Միջանցքների պատերի վրա պաշտպանիչ պլաստիկ պանելների տեղադրում 200մմ լայնությամբ	զմ	778	0.71	551.98
